

կան բառ և մի բանի տամնյալ թերականական կարևորագույն կանոններ իմանալու դեպքում գործեն ազատ հնարավոր է կարդալ օտար լեզվի տեքստը: Ամեն մի սովորող կարող է հասնել այդպիսի արդյունքի մոտավորապես մեկ տարվա ընթացքում:

Եջմի ամեն մի դասատու գիտե, որ պետք է սովորողներին ուսուցանի առօգանություն, թերականություն և լեզվիկա: Բայց դրանցից ո՞չը ինչ չափով՝ նրա համար դժվար է սուսուց որոշել: Այս հարցում չի օգնի նաև դասավանդման մեթոդիկան: Եվ նորից օգնության է գալիս մաթեմատիկական լեզվաբանությունը: Ռուսական տեքստերի ուսումնասիրությունը՝ ինֆորմացիայի տեսության մեթոդի օգնությամբ, ցույց է տվել, որ թերականությանը (ավելի ճիշտ ծևաբանությանը) ընկնում է լեզվի կառուցվածքային ինֆորմացիայի ընդամենը միայն վեց տոկոսը:

Փորձ-ինչ անսպասելի արդյունք տվեց ֆրանսիական տեքստերի հետազոտությունը: Զևարանությանը բաժին ընկնող մասը այստեղ նույնպես բավական համեստ է (այն կազմում է մոտ տասներեք տոլկո), սակայն երկուուկես անգամ գերազանցում է ուսական ծևաբանությանը ընկնող մասին: Այսինչ մինչև միմա գտնում էին, թե ուսաց լեզուն շատ ավելի «ծևաբանական» է, քան ֆրանսերնենը:

Լեզվային ինֆորմացիայի ընդհանուր գումա-

❶ Փորձ դեպքեր

մեծ մարդկանց կյանքից

«Թրուն կարի նետ»

Մի անգամ շեխ բժիշկ Իոզեֆ Շկոդային հարցնում են, թե ինչպես բուժվել ծծմբաթթվի թունավորումից:

— Ծծմբաթթվի դեմ ամենալավ միջոցը կաթն է,— պատասխանում է Շկոդան:

— Իսկ ինչպես ընդունել այն, որպեսզի ամենամեծ էֆեկտը ստացվի:

— Ամենից լավ է, ինարկե, կաթը խմել ծծմբաթթվի հետ միասին:

րում թերականությանը բաժին ընկնող այս համեստ մասը ցույց է տալիս, որ սացիոնալ չէ, եթե ուսումնական ժամանակի հիմնական մասը հատկանշում են թերականական կանոններն անգիր անելուն, ինչպես անում են թերականական մեթոդի կողմնակիցները: Գյուավոր ուշադրությունը պետք է կենտրոնացնել բառապաշտիքի ուսումնասիրությանը վրա: Այս բանը հասկանալու համար հիշենք նեռագիր կավելու սկզբունքը. չէ որ նրանում հիմնական դեր են խաղում բառերը, իսկ նրանց թերականական կապը միանգամայն երկրորդական նշանակություն ունի: Եվ այսուհանդերձ նեռագիրը բոլորին հասկանալի է:

Մաթեմատիկական մեթոդների օգնությամբ լեզվի վիճակագրական «կորիվի» գտնելու ամեններն եւ վերացական գիտական պրոբլեմ չէ: Առաջին հերթին դա ժամանակի տնտեսման և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու հարց է: Հավակի թե հարի լինի հիշեցնել, թե որքան են ծանրաբեռնված դպրոցական և բուհական ուսումնական պլաններն ու ծրագրերը:

Մինչև վերջերս այն կարծիքն էր տիրում, թե լեզուն և նրա ուսումնասիրության տարրեր ասպեկտները հետաքրքրություն են ներկայացնում միայն լեզվաբանների համար: Իսկ այժմ մենք ականատես ենք լինում կիրառական լեզվագիտության բուռն զարգացմանը:

Ո. Պ.

Վահանավիր Էլ կմեայիբ

Գերյանացի բժիշկ Ռյուդինգերը երիտասարդ հասակում եղել է վարսավիր: Մի անգամ անհատումիկումում եղած ժամանակ նա նկատում է, որ ուսանողներից մեկը գանակ սրել շգթառ: Աւսանողը, որ ունեսր ժնողների տղա էր, Հանդշդոնորնն զրա է բերում:

— Բայց չէ որ ևս երբեք վարսավիր չե'մ եղել:

— Եվ դա երևում է, երիտասարդ, — հանգիստ պատասխանում է նրան Ռյուդինգերը, — Եթե դուք վարսավիր եղած լինեիք, ապա ձեզ ամբողջ կյանքում վարսավիր էլ կմեայիբ: